# *ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ*

*ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ*

## Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՄԵԿ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քրիստոսի Եկեղեցու կենսագործունեության և շարունակականության մեջ իրենց ուրույն տեղն ու նշանակությունն ունեն Եկեղեցու խորհուրդները, որոնց միջոցով ադամորդին տեսանելի, զգալի, շոշափելի ձևերի ներքո ստանում է Ս. Հոգու անիմանալի և անտեսանելի շնորհները: Աստվածային խորհուրդների միջոցով մարդ նաև շփման մեջ է մտնում, հաղորդակցվում իր Արարչի հետ՝ վայելելով անանց երջանկություն և անկողոպտելի ուրախություն՝ իր կյանքը փորձելով ապրել իբրև ճշմարիտ քրիստոնյա և Քրիստոսի զինվոր՝ դրանով իսկ երկրիս վրա վկայելով աստվածային ճշմարտությունների մասին: Իսկ Եկեղեցու խորհուրդների մեջ յուրաքանչյուր հավատացյալ մարդու համար շատ էական է Քրիստոսի մարմնի և արյան խորհուրդը՝ Ս. Հաղորդությունը, որի միջոցով մենք սրբվում ենք մեր մեղքերից, և աստվածային ողորմությամբ հողեղեններիս հնարավորություն է տրվում ճաշակելու Հիսուս Քրիստոսին՝ առավել ևս համոզվելու համար, թե որքան քաղցր է մեր Տերը:

Չնայած Եկեղեցու միությանը, այս խորհրդի գործնական կիրառության մեջ քրիստոնեական Եկեղեցիների միջև առկա են որոշ տարբերություններ՝ կապված սուրբգրային այս կամ այն հատվածի՝ տվյալ Եկեղեցու մեկնաբանության, հայրախոսական աղբյուրների, տեղական ավանդությունների և սովորույթների հետ: Նմանատիպ ուշագրավ խնդիրներից է Հայ Առաքելական Եկեղեցու անապակ գինով պատարագելու Սրբազան Ավանդությունը[1], քանզի մյուս բոլոր քրիստոնեական Եկեղեցիներն իրենց աստվածպաշտության մեջ օգտագործում են ջրախառն գինի:

Մեր նախնիք, պնդելով, որ Քրիստոս անապակ գինի է օգտագործել Ս. Հաղորդության խորհրդի հաստատման ժամանակ, ի շարս այլ վկայակոչումների, որպես ապացույց բերում են նաև Ս. Հովհան Ոսկեբերան Հայրապետի[2] (347-407) մեկ վկայությունը: Վերջինիս մեր հայրերն օգտագործում են այն ժամանակ, երբ ապացուցում են, որ Քրիստոս Վերջին Ընթրիքի ժամանակ ջուր չխառնեց իր վերցրած բաժակի մեջ: Այսպես՝ Ոսկեբերանը Մատթեոսի Ավետարանի իր մեկնության ԻԹ ճառում, մեկնաբանելով նույն Ավետարանի ԻԶ 29 համարի *«Բայց ասեմ ձեզ ո՛չ եւս արբից յայսմ հետէ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան հօր իմոյ»,* ասում է. *«Եւ ընդէ՞ր ո՛չ ջուր արբ յորժամ յարեաւն, այլ գինի, զի և զմիւս*

---

[1] Անապակ բաժակի մասին տե՛ս **Տիգրան սարկավագ Բաղումյան**, Անապակ բաժակի խնդիրը հայ վարդապետական մտքի անդաստանում, «Քրիստոնյա Հայաստան», 2004, թիվ 18-24, 2005, թիվ 1-6, 9-12:

[2] **Ս. Հովհան Ոսկեբերանը** ծնվել է Անտիոքում, ճարտասանության մեջ հմտացել Լիբանիոսի դպրոցում: 381 թ. Մելետիոս Անտիոքացու կողմից ձեռնադրվել է սարկավագ, իսկ 386 թ. Փլաբիանոսի կողմից՝ երեց: Վայելած հեղինակության և սրբակեցության շնորհիվ 398 թ. ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք: Բազմիցս աքսորվել է՝ իր կյանքն էլ ավարտելով աքսորի ճանապարհին՝ Կոմանայում: Բազմաժանր է նրա մատենագրական վաստակը՝ մեկնություններ, ճառեր, ներբողներ, թղթեր և այլն, որոնք իրենց բարերար ազդեցությունն են թողել քրիստոնեական քարոզխոսության վրա: Նրա գործերը հայերեն են թարգմանվել արդեն իսկ հեղինակի կենդանության օրոք:

*չար հերձուածն արմատաքի խլեսցէ, զի են ոմանք, որ ի խորհուրդն ջուր ի կիր արկանեն, ցուցանէ՝ թէ յորժամ զխորհուրդն աւանդեաց՝ գինով աւանդեաց. եւ յորժամ յարեաւն՝ առանց խորհրդոյ ի լոկ սեղանն զգինին ի կիր արկ. ի ծննդենէ որթոյ ասէ, եւ որթն գինի եւ ո՛չ ջուր ծնանի»*[3]:

Տողատակի ծանոթագրությունից պարզ է դառնում, որ Ոսկեբերանի վերոբերյալ վկայությունը դարերի ընթացքում զորավոր զենք և ամուր վահան է եղել մեր Եկեղեցու հայրերի և վարդապետների համար՝ հիմնավորելու և ապացուցելու համար անապակ գինով պատարագելու Հայոց Եկեղեցու Սրբազան Ավանդությունը: Նրանք միշտ ընդդիմացել են մյուսներին՝ հաճախ մեջբերելով Տիեզերական Եկեղեցում անառարկելի հեղինակություն վայելող Ս. Ոսկեբերան Հայրապետի այդ խոսքը: Ինչպես տեսնում ենք, առաջին անգամ մեր մատենագրության մեջ Ոսկեբերանի այս խոսքն օգտագործել է Սահակ Ձորափորեցի Կաթողիկոսը (677-703) *«Ընդդէմ երկաբնակաց նեստորականաց»* իր հայտնի գործում՝ մասնավորապես ասելով. *«...զի ի բե-*

---

[3] Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպոլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826, էջ 106, տե՛ս նաև սույն հատվածի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները, Избранные творения святого отца нашего Архиепископа Костантиграда Иоанна Златоуста, Толкование на святого Матфея евангелиста, книга вторая, Издательский отдел Московского Патриархата 1993, стр. 822, A select library of the Nicene and post-Nicene Fathers of the Christian Church, edited by Philip Schaff, v. X, Saint Chrysostom, Homilies on the Gospel of Mathew, Michigan, 1983, p. 492: Ս. Հայրապետի այս վկայությունը բառացի և ոչ բառացի վկայակոչված է այս խնդրի հետ կապված այլ աշխատություններում ևս. տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 479, (=ԳԹ), **Գարեգին Վ.**, **Յովսէփեան**, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899, էջ 194-195, **Վարդան Այգեկցի**, Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, քննական բնագիրը կազմեց Շահե քահանա Հայրապետեանը, ներածութիւնը՝ Յակոբ Քեռսէեանի, Երևան, 1998, էջ 259, 402, Գիրք թղթոց, Երուսաղէմ, 1994, էջ 470, 612, 635, **Քյոսեյան Հակոբ**, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ, Ա, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 253, Թուղթ երանելւոյն Պօղոսի Տարոնացւոյ յաղթող ախոյեան վարդապետի՝ ընդդէմ Թէոփիստեայ Հռոմ փիլիսոփային, Կ. Պոլիս, 1752, էջ 208, «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի», «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց», Նոր Ջուղա, 1688, էջ 423, Թուղթ ընդհանրական, արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, Ս. Էջմիածին, 1865, էջ 181, (=ԹԸ), Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909, էջ 131, Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս Վարդապետի Տարօնեցւոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց՝ միաբան Սրբոյ Էջմիածնի, Փարիզ, 1859, էջ 230, *«Թուղթ Եսայեայ վարդապետին պատասխանի ընդդէմ պարոն Հեթմոյ»*, ՄՄ ձեռ. N 9622, էջ 728, **Աղէքսանդր Վ. Պալճեան**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ Հռովմէական Եկեղեցւոյ ի Փլորենտեան սիւնհոդոսի, Վիեննա, 1878, էջ 245, (=ԱՎՊ), **Պարոյր Մուրադեան**, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, տե՛ս «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Զ, Երեւան, 1996, էջ 366, **Աւետիս քահանայ Դանիէլեան**, Կիրակոս Երզնկացի, Թուղթ առ Կարնեցիս տե՛ս «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Զ, Երևան, 1996, էջ 566, **Դոկտ. Օղլուգեան Աբէլ քահանայ**, Մատենագրական հետազօտութիւններ Մովսէս վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 150, (=ՄԵ), **Ղազար Ջահկեցի**, Աստուածաբանական դրախտ ցանկալի, Երուսաղէմ, 2002, էջ 369, Հանդիսարան ուղղափառութեան Հայոց Եկեղեցւոյ, յօրինեաց Տէր Մատթէոս արքեպիսկոպոս նախորդ Պատրիարք Կոստանդնուպօլսոյ, Կոստանդնուպոլիս, 1854, էջ 339, **Երուանդ Վրդ. Փէրտահճեան**, Հաղորդութեան Խորհուրդը, տե՛ս «Լոյս» շաբաթաթերթ եկեղեցագիտական, Նոր շրջան-առաջին տարի, 1905, հ. Ա, խմբագրապետ Բարգէն Ծ. Վ. Կիլէսէրեան, Կոստանդնուպոլիս, էջ 610, Աստուածպաշտութիւն Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ, Մասն առաջին, աշխատութիւն Ստեփանոս աւագ քահանայի Մանդինեանց, Վաղարշապատ, 1872, էջ 63:

*բոյ որթոյ ասէ, զի որթն գինի ծնանի և ոչ ջուր, այլ զմիւս հերձուածն արմատաքի խլեսցէ, զի են ոմանք, զի ի սուրբ խորհուրդն ջուր խառնեն»*[4]:

Մեջբերելով Ս. Հոր խոսքը՝ այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը եզրակացնում է. *«Տեսանես զի չար հերձուած ասէ զայն, որ զջուրն խառնեն ի սուրբ խորհուրդն»*[5]: Այսինքն՝ մինչև Տրուլի ժողովը, ուր և քննության առարկա էր դարձել նաև այս խնդիրը, Ս. Հայրապետի այս արտահայտությունն արդեն իսկ կիրառվել է մեր Եկեղեցում՝ ծառայելով որպես հզոր կռվան անապակ գինով Հայ Եկեղեցու պատարագելու Սրբազան Ավանդությունը ջատագովելու համար: Ուշադրության է արժանի հատկապես այն պարագան, որ Ոսկեբերանի *«զի են ոմանք, որ ի խորհուրդն ջուր ի կիր արկանեն»* արտահայտությունը Սահակ Հայրապետի մոտ հետևյալ ձևակերպմամբ է՝ *«զի են ոմանք, զի ի սուրբ խորհուրդն ջուր խառնեն»*[6]: Այսինքն՝ մեր Եկեղեցում Ոսկեբերանի այս խոսքն ընկալվել է իբրև մի արտահայտություն ընդդեմ այն մարդկանց, ովքեր Ս. Խորհրդի ժամանակ ջուր են խառնում և ոչ թե միայն ջրով պատարագում: Բայց, ի տարբերություն մեր Եկեղեցում արմատացած այս ընկալմանը, 1316 թ. Ադանայի ժողովում ընդունված սահմանադրության մեջ, ուր քննության առարկա է դարձել նաև Ոսկեբերանի այս արտահայտությունը, տուրք տալով բյուզանդական մեկնաբանությանը, ասվում է. *«...զի թէ խառնումն ասացեալ էր, յիրաւի էր կարծել զայս. այլ ի կիր արկանեն՝ ասէ, այսինքն՝ ջրով միայն գործեն զմարդեղութիւնն Քրիստոսի եւ զմահն»*[7]:

Պետք է նշել, որ Քրիստոսի Եկեղեցու լուսազարդ այս հոր սույն միտքը միանշանակ չի ընկալվել մյուս քրիստոնեական Եկեղեցիների կողմից՝ տեղի տալով տարաբնույթ մեկնությունների. մասնավորապես Բյուզանդական Եկեղեցու մեկնաբանությամբ Ս. Հովհան Ոսկեբերան Հայրապետի քննադատությունն այստեղ ուղղված է ոչ թե Ս. Պատարագի ժամանակ գործածվող գինու մեջ ջուր խառնողներին, այլ այն հերձվածողներին, ովքեր Տիրոջ մարմնի և արյան խորհուրդը միայն ջրով են կատարում՝ առանց գինու[8]: Հետաքրքիր է, որ Պոլսո Պատրիարքի սույն արտահայտությունը մեր Եկեղեցու տեսանկյունից մեկնաբանող Ս. Ներսես Հայրապետն ու Մովսես

---

[4] ԳԹ, էջ 479:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում:

[7] ԱՎՊ, էջ 287:

[8] Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ «Ջրամատուցողներ», օտար բառով՝ Aquarier, hydroparastatae, hydrothei են կոչվել այն աղանդավորական շարժումները, ովքեր մասամբ գաղափարական-աստվածաբանական, մասամբ էլ ճգնավորական պատճառներով մերժում էին գինու օգտագործումը Ս. Պատարագի մեջ՝ այն կատարելով միայն ջրով: Այդպիսի աղանդավորական հոսանքներից են եղել էբիոնականները, մանիքեականները, մարկիոնականները և էնկրատիտները, այս մասին տե՛ս Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, Թարգմանութիւնք պատարագաց Յունաց, Ասորւոց եւ Լատինացւոց հանդերձ քննութեամբք, նախագիտելեօք եւ ծանօթութեամբք ի Հ. Յովսեփայ Վ. Գաթրճեան, հրապարակեալ հանդերձ յաւելուածովք ի Հ. Յակովբոսէ Վ. Տաշեան, Վիեննա, 1897, էջ 19-21, ՄԵ, էջ 86, Encyclopedia of early Christianity, New York, London, 1998, p. 1179, Ancient Christian writers, The letters of St. Cyprian of Carthage, translated and annotated by G. W. Clarke, V. III, Letters 55-66, New York, 1986, p. 288-289, տե՛ս **Եզնիկ ծ. վարդապետ Պետրոսյան**, Հայրաբանություն, Ա մաս (Բ-Գ դդ.), Ս. Էջմիածին, 1996, էջ 235-236:

Երզնկացին տեղյակ չեն ահեղ խորհուրդը միայն ջրով պատարագողների մասին: *«Եւ մեք զանուն նոցա ո՛չ երբէք լուաք, եւ ո՛չ ի գիրս զանիմաստիցն զայն հերձուած ընթերցաք»*,- գրում է Ս. Ներսեսն իր թղթերից մեկում[9]: Ավելին՝ Ներսես Հայրապետի համար եթե անգամ հասկանալի է ջրախառն գինով պատարագելը, ապա միայն ջրով պատարագելը՝ ընդհանրապես անընմբռնելի. *«Զի որք ջրախառն գինեաւ առնեն, թերևս ունին ինչ պատճառս, իսկ որք լոկ ջրով առանց խառնման գինւոյ յո՞յր արդեօք անուն կատարեն զայն. ի Քրիստոսի՞ն, ո՛չ երբէք, զի նա գինի առ ի ձեռս ըստ աւետարանչացն»*[10]:

Նույն խնդրի մասին Մովսես Երզնկացին ասում է. *«Զի թէ եղեալ էր այս երբէք ուրեք միայն ջրով ումեք պատարագեալ, սուրբքն ծանուցեալ էին, եւ ի բազմաց լսելիս հասեալ էր մինչեւ ցայժմ, այլ զի ոչ էր՝ ոչ եղև յայտնի»*[11]: Սակայն ի տարբերություն Մովսես Երզնկացու՝ վերջինիս ժամանակակից Բարսեղ Մաշկևորցին (ԺԳ-ԺԴ դդ.) Մարկոսի Ավետարանի իր մեկնության մեջ գրում է. *«Դարձեալ՝ թէ վասն է՞ր էարբ գինի զկնի յարութեանն, զի խցցէ զբանս չար հերձուածողացն՝ զմանիքեցւոցն և զմարկիոնոսացն և զայնպիսի պատարագօղսն, որք ջրով միայն կատարեն զխորհուրդն, և կամ գինի և ջուր խառնեալ, զի ի բերոյ որթոյ ասաց, և որթն գինի ծնանի և ոչ ջուր»*[12]: Վերջինս, անշուշտ, տեղյակ է «ջրամատուցողների» խնդրին, սակայն նա նաև հավելում է, որ Քրիստոս իր հրաշափառ հարությունից հետո գինի ըմպեց, որպեսզի փակի նրանց բերանները, ովքեր կա՛մ միայն ջրով էին պատարագում, կա՛մ էլ՝ ջրախառն գինով: Եթե Բարսեղ Մաշկևորցու՝ Մարկոսի Ավետարանի մեկնության մեջ արտահայտած միտքը համեմատենք և զուգահեռ անցկացնենք Ոսկեբերանի խոսքի հետ, ապա, այո՛, բացառված չէ, որ Ս. Հայրն իր խոսքն ուղղել է միայն ջրով պատարագողների դեմ, սակայն այն նաև չի բացառում, որ այստեղ Ոսկեբերանը քննադատում է հենց ջրախառն պատարագողներին, ինչպես որ ընկալել են մեր Եկեղեցու ջերմեռանդ պաշտպանները: Տ. Աբել քհն. Օղլուգյանը, ով իր ուսումնասիրության մեջ անդրադարձել է Ոսկեբերանի սույն արտահայտությանը, քննության ենթարկելով այն՝ գրում է. *«Եթէ տուեալ հատուածը ճառի բովանդակային կառոյցից դուրս պոկուի եւ, իբրեւ այդպիսին, առանձին դիտուի, իրաւացի են հայադաւանները, բայց բովանդակային կառոյցի հետեւողականութեան մէջ՝ յունադաւանները»*[13]:

Եսայի Նչեցին (ԺԳ-ԺԴ դդ.) էլ իր գործերից մեկում նշում է, որ ինքը տեղյակ է սաբինացիների աղանդի մասին, սակայն եռամեծ վարդապետը միևնույն ժամանակ պնդում է, որ, այո՛, Ոսկեբերանի խոսքն այստեղ ուղղված է բաժակի մեջ ջուր խառնողներին: Ինչպես Նչեցին է գրում՝ *«...տեսի, քանզի ստոյգ օրինակն, զի զջուր արկանել ասէ և ոչ ջուր մատուցանել»*[14]:

Միայն ջրով պատարագողների մասին հիշատակում է նաև Հովհաննես Ծործորեցին († 1338): Նա, մեկնելով Մատթեոսի Ավետարանի ԻԶ 29 համարը գրում է. *«Եւ ըն-*

---

[9] ԹԸ, էջ 181:

[10] Նույն տեղում, 181-182:

[11] ՄԵ, էջ 114, այս մասին տե՛ս նաև նույն տեղում, էջ 86-90:

[12] Մարկոս, էջ 282:

[13] ՄԵ, էջ 86:

[14] ՄՄ ձեռ. N 9622, էջ 728:

*դէ՞ր ո՛չ ջուր արբ յորժամ յարեաւն, այլ գինի.* նախ զի ցուցցէ թէ նովիմբ մարմնով ո-րով զբաժակ մահուն էարբ և չարչարեցաւ, նոյն մարմնով և յարեաւ: Եւ երկրորդ՝ *զի զմիւս հերձուածն արտաքս խլեսցէ. զի են ոմանք որ ի սուրբ խորհուրդն ջո՛ւր ի կիր արկանեն*, այսինքն՝ որք փոխանակ գինւոյ ջրո՛վ պատարագեն, որք են ոբիանոսք... *յորժամ զխորհուրդն աւանդեաց՝ գինւով աւանդեաց յամօթ նոցին, և յորժամ յարեաւն առանց խորհրդոյ ի սեղանն լոկ գինին էարբ, քանզի ասէ թէ՝ ի բերոյ որթոյ, և որթն գինի և ո՛չ ջուր ծնանի*»[15]: Երբ համեմատում ենք վերջինիս մեկնությունը Ոսկեբերանի խոսքերի հետ, նույնական բաներ ենք տեսնում՝ չնայած Ծործորեցին չի տալիս այս հատվածում Ս. Հովհանի անունը: Ի՞նչն է այս պարագայում մեզ համար հետաքրքիր. եթե Հայոց Եկեղեցու հայրերը Ոսկեբերանի խոսքերի մեջ տեսել են անապակ գինով պատարագելը, ապա Հովհաննես Ծործորեցին, լինելով միաբարական շարժման կողմնակիցներից, այն մեկնաբանում է բյուզանդական ձևով՝ դրա մեջ տեսնելով միայն ջրով պատարագելը:

Ս. Հովհան Ոսկեբերանի՝ Մատթեոսի մեկնության այս հատվածը քննարկման առարկա է դարձել նաև Հուստինիանոս Բ կայսեր օրոք՝ 691/2թ. Կ. Պոլսում տեղի ունեցած Տրուլի Բ ժողովում[16]: Հայերի և անապակ գինու սովորության դեմ է այս ժողովի ԼԲ կանոնը, ուր մասնավորապես ասվում է. *«Մեզ է հասել այն տեղեկությունը, որ Հայերի երկրում, ովքեր անարյուն պատարագ են կատարում, սուրբ սեղանի վրա միայն գինի են մատուցում՝ առանց նրա հետ ջուր խառնելու, և նրանք վկայակոչում են Եկեղեցու վարդապետ Հովհան Ոսկեբերանին, որն իր՝ Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ հետևյալն է ասում. «Սրանից հետևաբար նրանք (հայերը) կարծում են, թե վարդապետը Ս. Պատարագի մեջ ջրի կիրարկությունը մերժում է: Որպեսզի նրանք այսուհետև անգիտության մեջ չմնան, ուղղափառ տեսանկյունից մեկնաբանում ենք Հոր միտքը: Որովհետև հին է չար աղանդը ջրամատուցողների, որոնք իրենց պատարագի ընթացքում գինու փոխարեն միայն ջուր են օգտագործում: Վերոնշյալ արտահայտությունն Աստվածակիր Հայրը կատարել է այս աղանդի ապօրեն ուսմունքը հերքելու նպատակով և ցույց տալու համար, որ այդ հակառակ է Առաքե-*

---

[15] Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի. արարեալ ի Սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17 հինգերորդ գլխոյն, և անտի աւարտեալ յերանելւոյն Յօհաննու Երզնկացւոյ որ և կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825, էջ 562-563: Սակայն նույն Ծործորեցին, մեկնելով Մատթեոսի Ավետարանի ԻԵ 50 համարը, Քրիստոսի կողից բխած արյան և ջրի համար ասում է, *«...այսպէս և ի կողիցն երկրորդն Ադամայ շինեցաւ եկեղեցի, որ ջրովն մաքրի և զարիւնն ըմպէ»*, նույն տեղում էջ 601: Այսինքն՝ Ծործորեցին այս հատվածը մեկնաբանում է մեր Եկեղեցու տեսանկյունից:

[16] Սույն ժողովը գումարվել է կայսերական «Trulla» կոչվող գմբեթասրահում, պատմության մեջ հայտնի է Տրուլի Բ ժողով անվանումով, որին մասնակցել են 165 եպիսկոպոսներ: Ժողովի ընթացքում ընդունվել են 102 կանոններ: Եթե «տիեզերական» հինգերորդ և վեցերորդ ժողովներում քննարկվել են միայն դավանաբանական բնույթի հարցեր, ապա այս ժողովի հիմնական նպատակն է եղել կարգապահական կանոնների սահմանումը: Այդ իսկ պատճառով եկեղեցական պատմության մեջ այս ժողովը հայտնի է Quinisext (Concilium Quinisextum, *Eunodos penthekte*) անունով, որ նշանակում է հինգերորդի և վեցերորդի լրացում, այս մասին տե՛ս The Catholic Encyclopedia, http://www.newadvent.org/cathen/04311b.htm., Պատմութիւն եկեղեցական, հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց, աշխատասիրութեամբ Տեառն Իգնատիոսի Վ. Փափազեանց Տարօնոյ Արքեպիսկոպոսի, Վենետիկ, 1848, էջ 315-316, **Մաղաքիա արքեպս. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 885-886, А. В. Карташев, Вселенские соборы. Клин, 2002, стр. 562-570:

*լական ավանդությանը: Քանի որ իր եկեղեցում, որտեղ նա քահանայագործում էր, անարյուն պատարագի ժամանակ ջուր էր խառնում գինու հետ...»*[17]:

Սույն կանոնից տեղեկանում ենք, որ հայերն այդ ժամանակ անապակ էին պատարագում, և որ արդեն իսկ հայ իրականության մեջ լայնորեն կիրառության մեջ էր Ս. Հովհան Ոսկեբերանի վերոգրյալ արտահայտությունը՝ չնայած այն բանին, որ Ոսկեբերանի այդ վկայությունը, ինչպես նշել ենք վերևում, առաջին անգամ օգտագործել է Սահակ Հայրապետը: Հավանաբար այն վկայակոչվել է նաև այլ գործերում, որոնք, դժբախտաբար, այսօր անհետ կորած են: Հ. Գաթրճյանը Ս. Պատարագին նվիրված իր արժեքավոր աշխատության մեջ նշում է, որ Տրուլի ժողովի 33-րդ կանոնից[18] իմանում ենք, որ հայերը ճիշտ չեն հասկացել Ոսկեբերանի խոսքերը: *«Չիմանալով որ սուրբ Հայրը Եբիոնացւոց մինակ ջուր գործածելուն համար կը գրէ, իրենց մոլորութեան նպաստ առած են: Պատմականօք միշտ մանուկ էին Հայք»*[19],- գրում է նա:

Նույն այս տեսանկյունից են Ոսկեբերանի խոսքերը մեկնաբանել նաև Սսի ժողովականները և Գրիգոր Անավարզեցին: *«Նա եւ յիշեալ են եւ մեկնաբանեալ զՅոհաննու Ոսկե բերանին զայն, որ ի վերայ այն բանի, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ, կու ասէ, թէ զայդ ասաց, զի միւս չար հերձուածն արմատաքի խլեսցէ, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն: Տե՛ս, չի՛ ասել, թէ ընդ գինին ջուր խառնեն, ապա ի Սուրբ Խորհուրդն ոչ միայն գինի է, թէպէտ գինին եւ հացն նիւթք են խորհրդոյն, որ զՔրիստոսի մարդեղութիւն եւ մահն նշանակէ: Եւ տե՛ս, չի ասել, թէ խառնեն, զի թէ խառնեն, ասէր Ոսկեբերանն, նա վստահի զմերս ճշմարտէր: Բայց ասաց, որ ի կիր արկանեն, որ Քրիստոսի մահուն խորհուրդն ջրով միայն գործեն առանց գինոյ»*[20],- գրում են Սսի ժողովա-

---

[17] The Council in Trullo revised, edited by George Nedungatt, Michael Featherstone, Pontificio Instituto Orientale, Rome, 1995, p. 106-108, http://prot-evgen.nm.ru/pages/articles/0124.htm, ՄԵ, էջ 79-80, ԱՎՊ, էջ 247-248, 287-288: Այս մասին տե՛ս նաև **Епископ Виссарион**, Толкование на Божественную Литургию по чину святителя Иоанна Златауста и святителя Василия Великого, Свято-Троицкая Сергиева Лавра, 1996, стр. 21:

[18] Իրականում հայերին վերաբերում է Տրուլի ժողովի ԼԲ կանոնը:

[19] ՍՊՀ, էջ 21: Մեծանուն բանասերը, տուրք տալով իր կաթոլիկ հայացքներին, ամեն կերպ փորձում է ցույց տալ հայերիս շեղված լինելը, անգամ մատենագրական վկայություններ է աշխատում գտնել մեր հայրերի գրվածքներում իր ասածն ապացուցելու համար: Օրինակ՝ նա մեջբերում է Հովհան Մանդակունու ԻԲ ճառից մեկ հատված, ուր ասվում է. *«Այլ մի՛ իբրեւ ի լոկ հաց հայիցիս, եւ մի՛ իբրեւ զգինի համարիցիս եւ տեսանիցես. զի ոչ տեսանելի է ահաւորութիւն Սուրբ Խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւնս. քանզի ոչ ինչ տեսանելի աւանդեաց մեզ Քրիստոս ի խորհուրդն եւ ի մկրտութիւնն, այլ իմանալի: Ջուր տեսանեմք, այլ աստուածային բանին հաւատամք, որ ասէն, եթէ այս է մարմին իմ եւ արիւն. որ ուտէ ի մարմնոյ իմմէ եւ ըմպէ յարենէ իմմէ, նա յիս բնակեսցէ եւ ես ի նա, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում»*, տե՛ս Տեառն Հովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք, Վենետիկ, 1860, էջ 168: Գաթրճյանը ենթադրում է, որ ընդօրինակող գրիչն իմաստը փոխելու համար դիտավորյալ կերպով բնագրից գեղչել է հաց և գինի բառերը՝ թողնելով միայն ջուր բառը: «Նշանաւոր է *ջուր* բառին Խորհրդեան համար մնալը: Եթէ ասիկայ ջնջէր եւ նախընթացները թողուր, կ'անցնէր նենգութիւնն առանց իմացուելու, բայց չէ եղած: Փա՜ռք Տեառն»,- գրում է նա, տե՛ս նույն տեղում, էջ 69: Սակայն վերջինիս հակառակ՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Վարդան Հացունին, քննության ենթարկելով տվյալ հատվածը, ցույց է տալիս, որ Հովհան Մանդակունին այն վերցրել է Ոսկեբերան Հայրապետի գործից, ուստի զուր է Գաթրճյանի ջանքն այդ մասում ջուր խառնելու վկայություն տեսնել, տե՛ս Ս. Պատարագի օրերն, տեսակք եւ ժամեր Հայ Եկեղեցւոյ մէջ ի Հ. Վարդանայ Հացունւոյ, Վենետիկ, 1899, էջ 11-12, «Լոյս», էջ 611:

[20] Մովսես Երզնկացի, էջ 83-84, հմմտ. ԱՎՊ, էջ 277:

կանները: *«Եւ այն, զոր ասէ սուրբն Յոհան ի մեկնութիւն Աւետարանին, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ, մինչև արբից զդա նոր ըստ յարքայութեան Հօր Իմոյ: Եւ ի վերայ բերէ, թէ զմիւս չար հերձուածն արմատաքի խլեսցէ, որ ի Սուրբ Խորհուրդն ջուր ի կիր արկանեն: Զայս ոչ վասն այնորիկ ասէ, թէ ընդ գինին ջուր խառնեն հերձուած անուանելով, այլ որ զսուրբ խորհուրդն ջրով միայն կատարէին առանց գինենոյ: Եւ թէ ընդէ՞ր ոչ յայտնեաց զանուանս այնոցիկ Սուրբն Յոհան, նա առ մեզ չէ յայտնի...»*[21],- գրում է Անավարզեցին: Նույն ձևով են ըմբռնել նաև 1316 թ. Ադանայի ժողովականները. *«զիտասցեն եւ ուսցին, զի վասն ջրամատուցողացն ասէ վարդապետս զայս, զի ոչ ասէ խառնումն ի գինին, այլ արկումն ջրոյ ի խորհուրդն»*[22]:

Ամփոփելով այս ամենը՝ կարծում ենք, որ ինչ տեսանկյունից էլ քննարկենք և վերլուծենք Ս. Հովհան Ոսկեբերանի վերոբերյալ խոսքը, պարզ է մեկ բան, որ կրկին խնդիրը մեկնաբանության ծիրում է: Այսօր դժվար է ասել, թե իրականության մեջ ինչ է նկատի ունեցել Ս. Հայրը՝ այս տողերը շարադրելիս: Գոյություն ունեն մեկնաբանության երկու մոտեցումներ, որոնք կարևոր են յուրաքանչյուր կողմի համար: Կարելի է տարբեր կողմերից և տեսանկյուններից վերլուծել և քննության ենթարկել Ոսկեբերանի արտահայտությունը: Սակայն միևնույն ժամանակ հստակ է, որ իր վճռական և որոշիչ խոսքը պիտի ասի Սրբազան Ավանդությունը և տվյալ Եկեղեցու մոտեցումն այս հարցում: Ուստի ինչպես ժամանակին ճիշտ է նկատել Տեր Աբել քահանան՝ *«Մեր մատենագրության մէջ Ոսկեբերանի «Մատթէի Մեկնութեան» հայերէն թարգմանութիւնը Ոսկեդարեան ընտիր եւ բնագրին հարազատ մի գործ է, եւ մեր Հայրերը մեզ հետաքրքրող այդ տեղը հասկացել են այնպէս բառացի, ինչպէս որ այն ծորել է հեղինակի գրչից»*[23]:

---

[21] **Եզնիկ աբեղա Պետրոսյան**, Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին Հայոց .ՉԾԸ.» դավանաբանական թուղթը, «Էջմիածին», 1974, Ժ, էջ 50, հմմտ. նաև՝ ՄԵ, էջ 83-84:

[22] ԱՎՊ, էջ 287:

[23] ՄԵ, էջ 85: